


677

411-818

Վ. ԶԵՐԵՎԱՆՎ



ՄԵԾ

ՈՒՍՈՒՑԻԶԸ

3 K 16

9-44

ԴԵՏԻՐԱՏ • 1 9 3 3 • ՅԵՐԵՎԱՆ

Արմ.

2-6329a
ՀԼ. ՁԵՐԵՎԿՈՎ

17 MAY 2005
2-6329-03 NOV 2003

3K16

9-44

801

ՄԵԾ ՈՒՍՈՒՑԻՉԸ

(ԿԱՐԼ ՄԱՐՔՍ)

ՄԽԵ. № 21216

ՊԵՏՐՈՍ

1933

ՅԵՐԵՎԱՆ



39586-63

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Կարլ Մարքսը ծնվել է ղեռ անցյալ դարում, 1818 թվին, գերմանական մի փոքրիկ քաղաքում:

Կարլի հայրը, վոր մի գատական աշխատավոր էր, իր ժամանակի մեծ մասը դատարանումն էր անցկացնում, իսկ մայրը—մի սիրալիր երգչուհի կին—ամբողջովին նվիրված էր իր ընտանեկան հոգսերին:

Կարլը յերբ դպրոց է մտնում, պարապմունքներն աշխատեց հեշտ են լինում նրա համար, ինչպես մանկական խաղեր:

Կարլը միայն «կրոնի» մեջ է թույլ լինում: Սրանից պարզ յերևում է, վոր ղեռ մանուկ որերից նա վոչ մի հետաքրքրութուն չի ունեցել ղեպի «աստվածային հիմարությունները», վորոնցով և հիմա էլ բուրժուաներն աղբակոխ են անում մանուկ գլուխները:

Դրա փոխարեն Կարլի մեծ և պայծառ խելքն ոգնում էր նրան հաղթահարելու այն ամենը, ինչ վոր սովորեցնում էին դպրոցում:

Բարձր դասարանում Կարլը մի փայլուն շարադրություն է գրում: Այդ շարադրությամբ նա ապացուցում է, վոր մարդ իր վարմունքների մեջ ազատ, անկախ է: Մարդիկ այն ուղիով են գնում, ղեպի վորը հասարակական զարգացումն է հրում:

Այդ ուղիղ միտքը յերեւայի գլխում բոլորովին ինքնուրույն է ծնվում: Նա այդ միտքն այնպիսի մեծ թափով ե արտահայտում, վոր ապշեցնում ե ուսուցիչներին:

17 տարեկան հասակում Կարլն ավարտում ե դպրոցը և գնում ուրիշ քաղաք՝ համալսարանում շարունակելու իր ուսումը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑՆԵՐԸ

Կարլ մարքան սկսում ե մտքի տակ առնել իր շրջապատը: Նա անխառնում ե իր այն մըտքերին պատասխանել, վորոնք ծագել եյին նրա գլխում դեռ պատանեկան տարիներում, իր առաջին շարադրությունը գրելիս:

Ինչի՞ցն ե, վոր մարդիկ վատ են ապրում:

Ինչի՞ցն ե շրջապատի այդքան թշվառությունն ու տանջանքը:

Ինչի՞ցն ե, վոր մարդկանց մեծ մասն ուրիշների համար ե աշխատում և վոչ թե իր համար:

Կարլն այդ ժամանակ ապրում եր Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում: Մի փոքրիկ սենյակում որ ու գիշեր նա նստած եր գրքերի հետ: Նա վորոշում ե, թեկուզ ինչ ել լինի, պատասխանել այն հարցերին, վորոնք իրեն հանդիստ չեյին տալիս:

Տանտերը շատ գոհ եր իր տնկեց Կարլից: Յերթասարդն անհանգստություն չեր պատճառում վոչ մի բանով, քեֆ չեր սարքում, գիշերները չեր ուշանում Բեռլինի ուրիշ ուսանող-

ների պես: Տանտերը սիրում եր յերբեմն դալ Կարլի մոտ՝ դեսից, դենից խոսելու:

Մի անգամ նա մոտենում ե Կարլի սենյակին, մատը բարձրացնում ե, վոր դուռը թակի: Բայց հանկարծ նրա հոնքերը վեր են դնում, աչքերը չոփում են, ինքն ել գլուխը թեքում ե և ուշադրությամբ ականջ դնում:

Դռնից լավում են ոտարոտի, բոլորովին անսովոր ձայներ: Մի ինչ վոր բան ուժով կըպչում ե պատերին ու հատակին: Բարկացկոտ ձայնն ել հայհոյանք ե թափում:

Տանտերը բերանը բաց՝ կողպեքի ձեղքից նայում ե սենյակի ներսը: Ի՞նչ ե տեսնում: Տեսնում ե, վոր դեմքն ալլալած Կարլը վերցնում ե գրքերը սեղանից ու շարտում, պատեպատ տալիս: Հատակին ընկնող գրքերը բացվում են, թերթերն ել՝ շրջյուն հանում:

Տանտերը դեռ յետ չքաշված՝ հանկարծ դուռը յերեսնիվար բացվում ե ու կաշում նրա ճակատին:

Նրա մոտով դուրս ե սլանում Կարլը և դեպի բակ: Տանտերը մի քանի վայրկյան ծալապատիկ նստած իր ճակատն ե չիում: Հետո վոտի յե կանգնում և, ինչպես կար, առանց գըլխարկի, վազում ե փողոց: Հետո մի քիչ անց, նա վերադառնում ե բժշկի հետ միասին: Յերկուսով խորհուրդ են անում և մտնում բակ:

Կարլը գլուխը ձեռքերի մեջ առած, նստած ե լինում խնձորենու տակ և այս ու այն կողմ՝ որորովում:

Բժիշկին զգուշությամբ գնում-նստում է նրա կողքին, իսկ տանտերը հենվում են ծառին:

— Այսօր ինչ լավ յեղանակ ես,—սկսում է բժիշկը:

Կարլը նայում է բժիշկին իր փայլուն, սևորակ աչքերով և հայացքը դարձնում գեպի տանտիրոջ ալյալված դեմքը, հետո ել ժպտում: Այդ ժպտից նրա թխադույն դեմքն ավելի հրապուրիչ է դառնում:

— Դուք այնպես եք կարծում, վոր յես խելագար եմ: Դժբախտաբար մո'չ: Դժբախտաբար՝ իմ բանականությունն այնքան պայծառ է, վոր կարգացածս գրքերի բոլոր հիմարությունները պարզ տեսնում ես: Նա տեսնում է և իմ սեփական հիմարությունները,—վերջացնում է Կարլը շատ տխուր:

Նա պինդ բռնում է բժիշկի ձեռքերը և հաստատակամ նայելով նրա աչքերին՝ հուզված հարց է տալիս:

— Դուք կարո՞ղ եք հանգիստ ապրել, յեր ձեր շուրջը թշավառություն ու տանջանք է:

Բժիշկը դեռ չպատասխանած, Կարլը թրուհում է նստարանից ու մազերը փշաքաղված սկսում է տաք-տաք և անզուսպ խոսել:

Նա պատմում է իր սենյակի առանձնության մեջ մի կույտ գրքերի և իր ձեռքով գրոտած թերթերի վրա անցկացրած անքուն գիշերներին: Պատմում է թե ինչպես ինքը վորոնել է իր հարցերի պատասխանը և գտնել չի կարողացել: Պատմում է թե ինչպես հետո իր

վրա կատաղություն ու չարություն է գալիս գեպի այդ գրքերը:

Բժիշկը կարեկցաբար շարժում է գլուխը և ոգտվելով Կարլի շունչ առնելուց, առաջարկում է սենյակ գնալ:

Այնտեղ բժիշկը շատ ուշադիր նայում է Կարլին և լուրջ ասում.

— Ոհո'... Դուք կորցրել եք ձեր առողջությունը: Նախ լավ բժշկվեցեք, ապա նոր մարդկությունն ազատեցեք:

Բժիշկը Կարլի համար դեղերի հետ միասին կատարյալ հանգիստ է գրում:

Բժիշկի խորհրդով Կարլը տեղափոխվում է մի խաղաղ ձկնորսական գյուղ, Բեռլինի մոտ: Այստեղ նա աստիճանաբար կարգի յե բերում իր մտքերը և տեսնում է, վոր ինքն այնպես չէ գործել, ինչպես պետքն է: Չե՞ վոր, նախ՝ անհրաժեշտ է գիտություններին հաստատապես տեր դառնալ: Այն ժամանակ միայն հեշտ կլինի գտնել թե վո՞րտեղից է կյանքի մեջ ծագում չարիքը և աշխատել այն վոչնչացնելու: Մի քանի ամսում այդ բանը չի կարելի անել:

Կարլը հանգստացած և կազդուրված վերադառնում է Բեռլին և սկսում յեռանդով ուսումնասիրել գիտությունները:

Շուտով նա առաջ է անցնում իր ընկեր ուսանողներից: Մինչև անգամ պրոֆեսորները դարձանում են նրա մեծ հասկացողության և խելքի պայծառության վրա:

— Սա մտքերի շտեմարան է, —ասում էյին
նրա մասին:

ԿՈՒՎԻ ՈՒՂԻՆ

Կարլը 23 տարեկան ավարտում է Բեռլինի
համալսարանն ու գիտնականի կոչում ստա-
նում: Այդ ժամանակ էլ նա ամուսնանում է իր
դպրոցական ընկերուհու—Ջեննի Վեստֆալենի
հետ:

Հիմա Մարքսը պատասխանում է այն դը-
լիսավոր հարցերից մեկին, վորոնք անհանգըս-
տացնում էյին նրան դեռ պատենական տա-
րիներում: Նա հասկանում է, վոր հասարա-
կական կյանքի ամբողջ չարիքը նրանից է ծա-
գում, վոր մարդկության վիթխարի մասսան
ապրում է չքավորության և տանջանքների
մեջ, իսկ նրա մի փոքր մասն ոգտվում է աշ-
խարհի բոլոր բարիքներից: Մարքսը չի ու-
զում միանալ այդ սակավաթիվ, մի բուռ
մարդկանց հետ:

Նա իր վիթխարի խելքն սպասարկության
չի բերում բուրժուական հասարակությանը:
Նա հաստատուն և անդառնալի վորոշում է
այլ ճանապարհով գնալ, այդ հասարակության
դեմ կռվելու ճանապարհով:

Նա ասում է իր բարեկամներին.

— Ապրել— նշանակում է աշխատել, իսկ
աշխատել— նշանակում է պայքարել:

Յեվ փայլուն լրագրական հոդվածներով
այն մեծ պայքարի սկիզբն է դնում, վորը չի

վերջանում մինչև նրա կյանքի վախճանը: Իր
լրագրական աշխատանքի հենց առաջին որե-
րից Կարլ Մարքսն իրեն ցույց է տալիս հեղա-
փոխական: Նա իմանում է, վոր Գերմանիայի
նահանգներից մեկում գյուղացիներին խիստ
ճնշում են: Ազա՛հ կուլակ—վաշխառուները շա-
րունակ ճորտության մեջ էյին պահում աշխա-
տավոր գյուղացիությանը:

Պետական իշխանությունը դաշնակցում էր
վաշխառուների հետ: Պետական պաշտոնյանե-
րը համերաշխ պաշտպանում էյին կուլակների
չահերը, հենց այդ կուլակների հետ չքավո-
րության դուռը հասցնելով առանց այն էլ
կարիքից խեղդված աշխատավորությանը:

Մարքսը սրտին շատ մոտ էր ընդունում
սնանկության հասած գյուղացիությանը: Իր
լրագրական հոդվածներում պատմում էր Գեր-
մանիային նրանց թշվառությունը և ապացու-
ցում էր, վոր դրանում մեղավորն ամենից ա-
ռաջ ինքը—պետությունն է, կուլակներին յերես
տվող պետությունը:

Այդ առաջին ուսմբն էր, վոր Մարքսն ար-
ձակում էր գերմանական իշխանության վրա:

Այդ հոդվածներից հետո անմիջապես փա-
կում են լրագիրը: Մարքսն ու Ջեննին հեռա-
նում են Գերմանիայից, վոր անարգելք շարու-
նակ են հեղափոխական աշխատանքը: Այդ ժա-
մանակից սկսվում է նրանց թափառական
կյանքը, վորպիսին միշտ էլ իսկական հեղափո-
խականների բաժինն է բուրժուական յերկրնե-
րում:

Նրանք գնում են Փարիզ, Ֆրանսիայի մայրաքաղաքը: Այստեղից Մարքսն իր անդուլանդադար լրագրական պայքարն է շարունակում գերմանական իշխանության դեմ:

Փարիզում Կարլի համեստ բնակարանից միանգամայն հեղափոխական հոտ եր փչում:

Ա! անալոր, մարտիկները զանազան կողմերից նրանց շուրջն են հավաքվում: Այստեղ է տեղի ունենում Կարլ Մարքսի և մի ուրիշ մեծ հեղափոխականի—Ֆրիդրիխ Ենգելսի հանդիպումը, այն Ենգելսի, վորն իր անբողջ կյանքում դառնում է Կարլ Մարքսի բնկերն ու զինակիցը՝ բուրժուական աշխարհի դեմ կռվելիս:

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարքսը տուն վերադառնալիս առհասարակ կնոջը պատմում եր որվա անցուղարձը:

— Այսօր յես մեկի հետ ծանոթացա, — ասում է նա, ծխախոտը բերանին, բազկաթուռի մեջ նստած, — ով է իմանում թե ինչ մարդ է:

Ձեննին հարցական բարձրացնում է աչքերը դեպի նա:

— Անունը Ֆրիդրիխ Ենգելս է, ասում են՝ հեղափոխական է, — բացատրում է Մարքսը:

Մի քանի օրից հետո Մարքսյանների տունն է գալիս մի չիկահեր, լավ հագնված յերիտասարդ: Մարքսն անվստահ է ընդունում նրան և միայն քաղաքավարությունից ստիպված խոսում է հետը:

Սոսում են Գերմանիայի մասին: Յերիտասարդն իր կարծիքն է հայտնում: Մարքսն ուղղում է նրա վրա իր պայծառ աչքերը և միջանի հարց է տալիս հետաքրքրությամբ:

Յերիտասարդի պատասխանները միանգամայն հուզում են Մարքսին: Նա զգում է, վոր



իր դիմացինն իսկական հեղափոխական է: Մարքսը գնում—գալիս է սենյակով, թափահաբելով թեվերը, տաք—տաք արտահայտելով իր մտքերը:

Բաժանվելիս Մարքսը պինդ սեղմում է հյուրի ձեռքը և բարեկամաբար առաջարկում:

— Շուտ—շուտ յեկեք մեզ մոտ:

— Այդ Ֆրիդրիխի հետ մենք, կարծեմ,

պղպեղ կցանենք ծերունի Ֆրիդրիխի աչքերը,—կնոջն է ասում Մարքսը, հետն ել արորում իր ձեռքերը:

Դրանով նա ակնարկում է գերմանական իշխան Ֆրիդրիխին: Այդ հանդիպումը Մարքսի կյանքում մի մեծ անցք է լինում, վորը տալիս է նրան մի հավատարիմ ընկեր, մինչև կյանքի վերջը:

Ֆրիդրիխ Ենգելսն ել այնպիսին եր, ինչպես և Կարլ Մարքսը, մի կրակոտ մարտիկ՝ աշխատավոր մարդկության բախտավորության համար: Նա ել մեծ խելքի տեր եր, ինչպես և Մարքսը: Ֆրիդրիխ Ենգելսը վոչ թե Մարքսի ոգնականն է դառնում, այլ նրան հավասար զինակից այն մեծ պայքարում, վոր յերկուսով վարում էյին հին աշխարհի դեմ:

ԱՔՍՈՐՈՒՄ

Փարիզից Մարքսը վրդովում է Գերմանիան: Նա իր հողավածների մեջ խիստ մտրապնդում է Գերմանիայի իշխաններին: Այն ժամանակ գերմանական իշխանությունները պահանջում են, վոր Մարքսին աքսորեն Փարիզից:

Մարքսը վորոշում է գնալ Բելգիայի մայրաքաղաքը—Բրյուսել: Սակայն գնալու համար փող չի լինում:

Մարքսը մի քանի օր անհաջող փորձեր է անում և, այն է, մոտենում է հուսահատության:

Մեկ ել անսպասելի կերպով փող է ստա-

նում Ենգելսից, վոր այդ ժամանակ Գերմանիայումն է լինում:

— Յես ընկերներիս շրջանում ստորագրություն բաց արի,—գրում է Ենգելսը,—վոր մեզ վրա ընկնեն քո աքսորանքի հետ կապված բոլոր ծախսերը: Ուղարկում եմ նույնպես և իմ աշխատավարձը: Թող չուրախանան այն շները, վորոնք իրենց նենգությամբ դրամական դժվարություններ պատճառեցին քեզ»:

Բրյուսելում արդեն սպասում էյին Մարքսին: Անհասլաղ նրա բնակարանն է գալիս մի պաշտոնյա ու պահանջում, վոր նա Բելգիայի մասին վոչինչ չգրի:

Մարքսը բուրժուական ամբողջ աշխարհի համար մի հանգիլի թշնամի չէ դառնում: Բուրժուազիան զգում է, վոր Մարքսը պրոլետարիատի մեծ առաջնորդն է: Նա խիստ վախում եր Մարքսի հողավածներից, վորոնցով պրոլետարիատը կանչվում եր կազմակերպված, անդուլ պայքար մղելու կապիտալի դեմ:

Ինչպես Ֆրանսիայում, այնպես ել Բելգիայում բոլոր աչքի ընկնող հեղափոխականները հավաքվում են Մարքսի շուրջը: Այնտեղ յեռ ու գեռի մեջ եր տենդոտ կյանքը, ինչպես և Ֆրանսիայում:

Սկսվում է փոխականչը այն ընկեր հեղափոխականների հետ, վորոնք դեռ Գերմանիայում ու Ֆրանսիայումն էյին: Շուտով Բրյուսել է գալիս և Ենգելսը:

Այդ ժամանակ Յեվրոպայի բոլոր յերկրներ-

բում սկսում ե հեղափոխական ամպրոպի հոտը
փչել: Բուրժուազիան ամեն տեղ աշխատում ե
ոգտագործել աշխատավորների անբավականու-
թյունը, վոր նույն աշխատավորների ոգնու-
թյամբ տապալի իշխաններին: Հետո, այդ
կերպ իշխանության տեր դառնալով, նա կշա-
հագործի նույն աշխատավորությանը:

Պրոլետարիատը հավաքում ե իր ուժերը:
1847 թվի ամբանը կազմակերպվում ե «Կո-
մունիստական միությունը», վորի գլուխն
անցնում ե Կարլ Մարքսը:

Ենգելսի հետ միասին նրանք գրում են
Միության անունից նշանավոր «Կոմունիստա-
կան մանիֆեստը»:

Այդ մանիֆեստը մի բոցավառ կոչ ե՝ ուղ-
ղած բոլոր յերկրների աշխատավորներին: Մա-
նիֆեստում ցույց ե տրված, թե ի՞նչ ե իրենից
ներկայացնում բուրժուական հասարակարգը և
ի՞նչ ճանապարհով ե նա առաջ ընթանալու: Մա-
նիֆեստը պարզ և ճիշտ պատասխաններ ե տա-
լիս գլխավոր հարցերին:

— Ո՞ւմից ե կազմված հասարակությու-
նը:

— Նախ և առաջ յերկու հիմնական դասա-
կարգից—պրոլետարիատից և բուրժուազիա-
յից:

— Այդ յերկու դասակարգը կարո՞ղ են
իրար հետ հաշտ ապրել:

— Վոչ յերբեք:

Ինչո՞ւ:

— Վորովհետեւ բուրժուազիան շահագոր-
ծող դասակարգ ե: Նա պրոլետարիատի աշխա-
տանքովն ե ապրում: Նա իր բոլոր ուժերը գոր-
ծադրում ե, վոր ընդմիշտ իր իշխանության
տակ պահի պրոլետարիատին:

Իսկ ի՞նչ բանի յե ձգտում պրոլետարիա-
տը:

— Պրոլետարիատը պայքարում ե բուրժու-
ազիայի դեմ, վոր նրա ձեռքից իշխանությունը
խլի:

Վերջիվերջո ո՞ւր ե առնելու այդ պրոլե-
տարիատի և բուրժուազիայի դասակարգային
պայքարը:

— Պրոլետարիատի լիակատար հաղթանա-
կին:

Ընդհանուր պատմությունն այդ ե ցույց
տալիս. այլ կերպ լինել չի կարող:

— Ինչի՞ յե պետք պրոլետարիատի հաղ-
թանակը:

— Վորպեսզի հիմնվի նոր-կոմունիստական
հասարակակարգ, վորը դասակարգեր չի ունե-
նա, վորտեղ մեկը մյուսի աշխատանքից չի
ոգտվում:

— Բուրժուազիային տապալելուց հետո
մենք անմիջապես կանցնենք սոցիալիստական
հասարակակարգի:

— Վո՞չ. կապիտալիստական տիրապետու-
թյան և կոմունիստական հասարակայնության
միջև մի անցողական շրջան կլինի: Այդ ժամա-
նակաշրջանում իշխանությունն իր ձեռքն ա-

ռած պրոլետարիատը կլինի տիրող դասակարգը: Նա իր յերկաթե ձեռքով կճնշի բուրժուազիայի դիմադրությունը, կհաստատի պրոլետարիատի դիկտատուրա: Նրա կառավարությունը չահերի պաշտպանը կլինի:

Մի բոցավառ, առույգ կոչով ե վերջանում այդ «Կոմունիստական մանիֆեստը: Այդ կոչը մարտահրավերի նման անցնում ե աշխարհից աշխարհ:

— Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

1848 թվին ճայթում ե Ֆրանսիական հեղափոխությունը: Փրանսիայից նա գլորվում ե Բելգիա, հետո՝ Ավստրիա և Գերմանիա:

Մարքսն իսկույն բռնվում ե բելգիական վոստիկանություն կողմից և իր ընտանիքի հետ արքորվում ե:

Մարքսն ել արդեն չեր ուզում մնալ Բելգիայում: Գալով փարիզ՝ նա այստեղից իրեն գցում ե Գերմանիա, վորտեղ հեղափոխություն պայթյունն եր լսվում:

Այստեղ նա ամբողջ յերկիրը շրջելով՝ հիմնում ե առաջին, իսկական հեղափոխական լրագիրը: Այդ լրագիրը տարածում ե Մարքսի ամպրոպային ձայնն ամբողջ Գերմանիայում: Մարքսն իր հոգվածներում բացատրում ե յերկրի դրությունը և բռնվորներին կոչ ե անում կռվելու նրան խաբող բուրժուազիայի դեմ:

Բայց պրոլետարիատն այն ժամանակ ա-

մեն տեղ թույլ ե լինում: Բուրժուազիան ձեռք ե բերում իր ցանկացածը և դավաճանում պրոլետարիատին:

Շուտով Մարքսը կանգնում ե դատի առաջ: Նա մեղադրվում ե ապստամբություն կոչ անելու համար: Բուրժուազիան ուզում ե այդ իր համար վտանգավոր մարդուն բանտում պահել:

Սակայն այդ մեծ հեղափոխականին գերելն այնքան ել հեշտ բան չեր: Դատարանում Մարքսը մեղադրվողից մեղադրող ե դառնում: Մի ցասկոտ ճառով նա մերկացնում ե բուրժուազիայի սոոր վարմունքը և ցույց ե տալիս, թե ինչպիսի ծանր զրկանքների կհասցնի աշխատավորությանը նրա տիրապետությունը:

Դատարանը կազմված ե լինում յերգվյալ ատենականներից՝ ընտրված բնակչության կողմից: Նրանց այնպես ե դրավում Մարքսի արտասանած ճշգրիտ և տաք ճառը, վոր միաձայն վորոշում են արդարացնել նրան: Յերգվյալ ատենապետը մոտենում ե Մարքսին ու ձեռքը սեղմում:

— Մենք ձեզանից շատ չնորհակալ ենք այն բանի համար, վոր դուք մեր աչքերը բաց արիք, — ասում ե նա:

Սակայն, չնայած դատարանի արդարացմանը, իշխանությունները հրամայում են, վոր Մարքսն անմիջապես հեռանա Գերմանիայից:

Մարքսն ընտանիքով ուղեվորվում ե հաշվով չորրորդ արտաքաղաքը:



վում ե Անգլիայի մայրաքաղաքը—Լոնդոն,
և ապրում ե մինչև իր կյանքի վերջին օրերը:

ՄԱՐԺՍԸ ՅԵՎ ՅԵՐԵՆԱՆԵՐԸ

Մարքսը խրվում ե գիտության մեջ: Նա
գիտությանն այնպիսի յեռանդով ե անձնա-
տուր լինում, ինչպես հեղափոխությանը, վո-
րովհետև գիտությունը ծառայում ե հեղափո-
խությանը:

Մարքսին պակասում եր միայն նրա հա-
վատարիմ բարեկամը: Բայց Ենգելսը յերկար
Ժամանակ Մարքսից հեռու մնալ չեր կարող:
Շուտով թիկնավեա, ամրակազմ Կարլի կողքին
յերևում ե Ֆրիդրիխի բարակ տեսքը:

— Ե, դու ժողովուրդ մնացիր, վորտեղից
բուսար, — հուզված հարցնում ե Մարքսը:

— Իտալիայից.

— Իտալիայից... վոր քամին եր քշել քեզ
այնտեղ:

— Հեղափոխական քամին, — Ժպտում ե
Ենգելսը: Նա ուռցրեց իմ նավի առագաստ-
ները և քշեց—բերեց հեղափոխության առաջ-
նորդի մոտ:

— Լավ, լավ... ասում ես ելի... այլայլ-
ված յետ—յետ ե գնում Մարքսը և անսպասելի
սեղմում ե իր գրկում նիհար Ֆրիդրիխին:

Պարզվում ե, վոր Ենգելսն ե բանտարկված
լինում Գերմանիայում: Հետո ազատվում ե և
կռվում գինյորների հետ բանվորների ապրո-
տամբության Ժամանակ: Պարտվելուց հետո

ազատվում ե ու փախչում Իտալիա, այնտեղից
ել գալիս ե Լոնդոն, Մարքսի մոտ:

— Փողի կողմից, հավանական ե, նեղու-
թյուն կա, — հոգատար հարցնում ե Ենգելսը:

Մարքսը շփոթված Ժպտում ե: Ջեննին թե-
թեակի կարմրում ե: Բայց չե՞ վոր այդ ար-
տասովոր մարդու առաջ նեղվել պետք չե: Այդ
մինչև անգամ կվիրավորի նրան:

— Դրա հատը չկա ամբողջ աշխարհում, —
մտածում ե Ջեննին:

Իսկ Ֆրիդրիխն ասում ե, վոր այդ դատարկ
բաներ են: Ինքը կապրի այստեղ, Անգլիայում
և կապը Մարքսի հետ չի խզի:

— Փող կլինի՞... բան չունես: Աշխատի՞ր,
բարեկամս: Թե կուսակցությունը և թե մարդ-
կությունը հավասար սպասում են քո աշխա-
տանքին, — թե առած ասում ե Ենգելսը, և բա-
րեկամները յերկուսով մտնում են Մարքսի ա-
ռանձնասենյակը:

Այստեղ Մարքսը հուզվում ե: Մարքսն ամ-
բողջ աշխարհում վոչ մեկին այնպես ականջ չե-
ր դնում, ինչպես Ենգելսին: Նրանք յերկուսով
թեքվում են մի մեծ կույտ, Մարքսի ձեռքով
մանր գրված, թղթերի վրա:

Այդ Ժամանակ դուռն աղմուկով լայն բաց-
վում ե: Շեմքին բուսնում ե սևահեր, թուխիկ,
հորը շատ նման Ջեննին: Նրա ուսից ձգվում ե
թաթերի վրա բարձրացած Մարքսի մյուս աղ-
ջիկը—Լաուրան, բոլորովին մորը նման: Ջեն-
նին սպառնալից դիտում ե սենյակը:

— Այսո՞ր... աշխատե՞լ... — խիստ ասում
է նա: — Այս ի՞նչ բան է: Դու այսօր հանգստա-
նում ես: Մոռացե՞լ ես:

Կարլը չփոթված ձեռքը խփում է ճակա-
տին:

— Տեսնում եք, բալիկներս, — փնթփնթում
է նա, ծուռ նայելով Ծրիդրիխին: — Իհարկե,
այսօր իմ հանգստի օրն է... Բայց սա ուզում
էր իմանալ...

— Ել վոչ մի խոսք, — չեչտում է Ջեննին ու
առաջ հրում Լաուրային: — Յես հայրիկին, դու՝
Ծրիդրիխին, հոպ, հեծնենք, — հրամայում է
նա:

Առանձնասենյակից դուրս են գլորվում
ձիավորված:

Կարլը Ջեննին չալակին, ծանրավարի վոտ-
ները գետնին տալով և իսկական ձիու նման
բաշը թափահարելով դուրս է վազում: Հետևից
ծոմովելով թռչկոտում է, ինչպես կողքից
լծած ձի, Ենգելսը՝ արմուկներով պինդ բռնած
Լաուրայի վոտները:

Կարլը չարթվա մեջ մի օր հանգստանում
էր իր լարված աշխատանքից, վորի վրա ան-
բուն գիշերներ էր անցկացնում: Այդ օրը մեծ
հեղափոխականը լիովին իր յերեսխաների տրա-
մադրության տակ էր գտնվում, այն յերեսխա-
ների, վորոնց այնքան շատ էր սիրում: Յեւ յե-
րեսխաներն էլ վոչոքի չէին գիշում իրենց իրա-
վունքները:

— Յերեսխաները ծնողների համար ամենա-

լավ դաստիարակներն են, — կոչում է Մարքսը և
աշխատում է ավելի վեր-վեր հանել Ջեննինին
իր լայն թիկունքի վրա:

Մարքսը սիրում է վոչ միայն իր սեփական
յերեսխաներին: Փողոցում մանուկները նրան
հիացմունք են պատճառում: Նա կանգնեցնում
է պատահած փոքրիկին, հետը խոսում, խո-
սեցնում և բաժանվելիս էլ քաղցրեղեն է տա-
լիս, թշիկին էլ մի թեթև թխում:

ԿԱՊԻՏԱԼԸ

Մարքսի աշխատանքի օրերը յերեսխաներն
այնպես զգուշ էին մտնում առանձնասենյակը,
վոր նրան խանդարած չլինեյին:

Իսկ Մարքսն օրըրով, գիշերներով նստում
էր աշխատանքի սեղանի առաջ կամ անկյունից
անկյուն էր վազում:

Մարքսի անց ու դարձից, վոտների տակ,
հատակի վրա շուտով սպիտակին է տլիս մի բա-
րակ չավիղ: Այդ չավիղով կարծես թե Մարքսը
վազում էր իր մտքերի հետևից:

Այդպես էր աշխատում Մարքսն իր մեծ
ստեղծագործության, աշխատավոր մարդկու-
թյան սեղանի գրքի — «Կապիտալի» վրա:

Այդ գիրքը գրում է Մարքսն ընդհատում-
ներով, մոտ քառասուն տարվա մեջ:

Յեւ ահա 1867 թվին հասնում է ժամը,
յերբ նա վերջացնում է այդ անմահ աշխատու-
թյան առաջին գրքի վերջին էջը: Այդ խոր գե-
շերով էր: Մարքսն իսկույն պետք է ուրախու-

Թյունը բաժաներ իր ընկերի հետ: Նա անմիջապես նամակ ե ուղարկում Ննգելսին:

—«Ուրեմն, առաջին հատորն ավարտված ե,—գրում ե նա: Այն ավարտելու համար միմիայն քեզ եմ պարտական: Գրկում եմ քեզ լի շնորհակալությամբ»:

Բոլոր յերկրների բուրժուազիան չարությամբ ու ատելությամբ ե վերաբերվում դեպի Մարքսի «Կապիտալը»:

Յերկու մեծագույն աշխատության մեջ՝ «Մանիֆեստում» և «Կապիտալում» ցուցադրվում ե այն, թե վորտեղից ե գալիս հարստությունը, ինչպես ե նա մտնում կապիտալիստների քսակները:

—Վորտեղից ե հայտնվել հարստությունը:

—Անհիշելի ժամանակներից սկսած՝ ուժեղ մարդիկ շահագործում են ավելի թուլերին, խլում են նրանց հողը, ապրուստի միջոցները և ստիպում են, վոր նրանք իրենց—ուժեղների համար աշխատեն: Կապիտալը լույս աշխարհ ե գալիս ուժեղների կողմից ճնշվածների արյունով և այդ ուժեղների մութ գործերի կեղտոտությամբ:

—Բայց ի՞նչպես ե ստացվում ոգուտը, շահը, վորո՞յ գործարանատեր կապիտալիստները հարստանում են:

—Բոլոր մեքենաները, գործարանները, հողը կապիտալիստական հասարակարգում պատկանում են առանձին կապիտալիստ-տերե-

րին: Բանվորը վոչինչ չունի, բացի իր ձեռքերից: Ապրուստ ճարելու համար նա պետք ե բանվոր մտնի գործարանատիրոջ մոտ:

Ուրիշ խոսքով՝ նա պետք ե իրեն ծախի, պետք ե ծախի իր ուժը, իր բանվորական ժամանակը: Ահա հենց այդ բանվորական ժամանակն ե, վոր ծախ ե առնում կապիտալիստը:

Յեվ բանվորն աշխատում ե գործարանատերին պատկանող դադգյահի առաջ: Մի բան պատրաստելու համար նա աշխատում ե ասենք թե հինգ ժամ: Կապիտալիստը բանվորին տալիս ե հենց այդ հինգ ժամվա աշխատավարձը:

Բայց չե՞ վոր գործարանատերը պետք ե և ոգուտ ստանա:

Դրա համար նա ստիպում ե բանվորին, վոր նա մեջք ծռի դարձյալ հինգ ժամ:

Յեվ ահա այն, ինչ վոր բանվորն աշխատում ե անվարձ յերկրորդ հինգ ժամում, դնում ե կապիտալիստի գրպանը:

Այսպես ե ստացվում ոգուտը կամ շահը: Պարզ ե, վոր նրան խլում ե կապիտալիստը բանվորի ձեռքից: Հենց այդ ե, վոր կոչվում ե բանվորի շահագործում կապիտալիստի կողմից:

Մարքսի ուսմունքն ապացնում ե ընդհանուր աշխարհն իր պարզությամբ: Բոլոր մարդիկ, ում համար թանգ եր աշխատավորության գործը, ուրախությամբ լցված զգում են, վոր իրենց վոտների տակ ամուր հող ունեն: Ընդհանուր աշխարհի բանվորությանը ցույց ե

տրվում այն ուղին, վոր տանում է դեպի ազատութիւն:

Մարքսն իր «Կապիտալ» գրքին մեծ ծավալ է տալիս: Բայց նա կարողանում է լույս ընծայել այդ վիթխարի աշխատութեան միայն առաջին հատորը: Նրա մահից հետո մնում են տասնյակ տետրակներ, մի քանի հազար էջերով:

Ենդելսը կարգի յե բերում այդ տետրակները և հրատարակում «Կապիտալի» յերկրորդ և յերրորդ հատորները

ԿԱՐԻՓ

Մարքսը համարյա քառասուն տարի աշխատում է «Կապիտալի» վրա: Այդ տարիները հերոսական մտավոր աշխատանքի տարիներ են: Դրա հետ միասին Մարքսն ամենայնոպեան մասնակցութեան է ունենում բոլոր խոշոր հեղափոխական յեյուլթներում և միջազգային բանվորական շարժումներից ձեռք չի քաշում:

Այդ տեսակ աշխատելով, իհարկե, Մարքսը չի կարողանում ապահովել իր ընտանիքը:

Այն սուղ վաստակը, վոր նա ստանում եր Թերթերում գրելուց, հազիվ Թե չոր հաջի փող լիներ և սովից ազատեր իր բազմանդամ ընտանիքը:

Մարքսի յերեխաները հաճախ դպրոցից յետ եյին ընկնում, վորովհետև վոտնաման առնելու համար փող չեր մնում: Շա'տ, չա'տ

անգամ ճաշին միս չեր լինում: Ընտանիքը հաճախ կիսաքաղց եր անցկացնում որերը:

Կյանքի այդ դժվարին և ծանր պայմաններից ինքը՝ Մարքսն ել, յերեխաներն ել հիվանդանում եյին:

Մարքսի յերեք յերեխան ել մեռնում են մշտական գրկանքների հետևանքով:

Մի անգամ Ենդելսը գալիս է Մարքսի մոտ, վոր միասին գնան այն գրադարանը, վորտեղ սովորաբար Մարքսն աշխատում եր: Մարքսը նայում է իր վրա և շփոթված ասում.

— Յես ել եմ գնալու այնտեղ,

— Վոր այդպես է, հագնվիր:

Մարքսն իսկի տեղից ել չի շարժվում: Նա նորից դիտում է իր խալաթը, կոշիկները և հոհոցը բռնում է ամբողջ սենյակը: Մարքսի համար ծիծաղելի յե թվում Թե ինչպես է ինքը փողաց դուրս գալու իրարից յեղած կոշիկներով, իսկ պիդժակն ել դրա՞յլ եր դրել:

Մի անգամ մի այսպիսի բան ել: Առավոտը սովորականի պես Կարլը մտնում է առանձնասենյակ աշխատելու: Նստած սեղանի մոտ՝ ձեռքը մեկնում է, վոր սեղանի աջ կողմից լրագրերը վերցնի ու աչքի տակով անցկացնի: Լրագիր չի լինում: Մարքսը կնճռոտվում է ու դուռը բաց անում:

— Ձեննի, — անհամբեր կանչում է նա, — դու այսոր մոռացել ես լրագիր առնելը:

Ձեննին քիպ մոտենում է Կարլին ու հանդիստ ասում.

— Փող չմնաց լրագիր առնելու, Կարլ:
Մարքսը նա յուր ե նրա խոնարհած գլխին և
անասելի խղճում ե իր կյանքի ընկերին: Հետո
Մարքսը վերադառնալով գեպի սեղանը, նըս-
տում ե գրելու:

Գրելու թուղթ չի լինում: Մարքսը քրքը-
րում ե տետրակներն ու գրքերը: Վոչ մի կտոր
մաքուր թուղթ: Ինչ կա— գրված ե: Այդ որը
թղթի համար փող չի ճարվում:

Կարիքը հետզհետե աճում ե: Հատկապես
Մարքսին նեղողը բնակարանի վարձն ե լինում:
Այն ժամանակ նա վորոշում ե կնոջ և յերեխա-
ների հետ տեղափոխվել այն զորանոցները,
վորտեղ ապրում եր Լոնդոնի ամենաչքավոր
բնակչութունը:

Նա հույս ուներ, վոր իր յերկու մեծ աղ-
ջիկները ծանոթների միջոցով դաստիարակչու-
հու տեղ կգտնեն ընտանիքներում:

Ենգելսն իմանալով այդ բանը լարում ե
իր բոլոր ուժերը և ոգնության ե դալիս Մարք-
սին: Նա իր բարեկամի համար հազար ուրբի
յե հավաքում:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ՆՈՐԴԸ

1864 թվի սեպտեմբերի մեջ բուրժուազիա-
յի դեմ կռվելու համար կազմակերպվում ե
«Բանվորական Միջազգային Յեղբայրությու-
նը»—Ինտերնացիոնալը: Մարքսն իսկույն այդ
միության գլուխն ե անցնում:

Նա բոլոր յերկրների բանվորներին կոչ ե

գրում: Նա գրում ե և Ինտերնացիոնալի կանո-
նադրությունը:

«Բանվորների ազատագրումն իրենց՝ բան-
վորների գործը պետք ե լինի»—գրում ե Մարք-
սը:

Ինտերնացիոնալի կանոնադրության մեջ
ապացուցվում ե, վոր բոլոր յերկրների բանվո-
րության շահերը նույնն են: Աշխատանքի հա-
մար,—ասում ե կանոնադրությունը.— հայրե-
նիք չկա:

Մարքսը կոչ ե անում բոլոր յերկրների պրո-
լետարիատին՝ միացյալ ուժերով հարձակում
գործել բուրժուազիայի վրա, կապիտալի դեմ
աշխատանքի մեծ պայքարում ոգնել մեկը
մյուսին:

Մենք արդեն գիտենք թե Մարքսն ի՞նչ մաս
նակցություն ուներ 1848 թվի հեղափոխու-
թյան մեջ: 1871 թվին Ֆրանսիայում նորից
պայթում ե հեղափոխությունը, այն ել բուր-
ժուազիայի դեմ: Փարիզում կազմակերպվում ե
առաջինն ամբողջ աշխարհում Կոմունայի բան-
վորական իշխանությունը:

Մարքսն իր ամբողջ օրտով Կոմունայի հետ
ե: Նա Լոնդոնից ինչով կարողանում ե, նրա-
նով ել ոգնում ե այդ իշխանությանը:

Բայց բանվոր դասակարգն այս ան-
գամ ել լավ պատրաստված չի լինում: Կոմու-
նան միայն յերկու ամիս ե գոյություն ունե-
նում: Ֆրանսիական սպիտակ գվարդիան խու-

Ժում ե Փարիզ և բանվորական իշխանությունն արյան հեղեղի մեջ խեղդում:

20 հազար սպանված և 40 հազար բանտերը լցված—ահա թե բուրժուազիան ինչպես ե վարվում իր իշխանության դեմ ապստամբած բանվորների հետ:

Ամեն կողմից թափվում եյին կեղտոտ բամբասանքներ բանվորական իշխանության գլխին: Վոչ վոք չեր համարձակվում նրա պաշտպանության համար ձայն բարձրացնել: Այն ժամանակ պաշտպան ե դուրս գալիս Մարքսը:

Ինտերնացիոնալի անունից մի կոչ ե հրատարակում: Նա գրում ե այն հայտնի գիրքը—«Քաղաքացիական կռիվը Ֆրանսիայում»:

Նա ընդհանուր աշխարհին ցույց ե տալիս բանվոր դասակարգի իսկական դեմքը և փառաբանում ե հերոսական կոմունան:

Լոնդոնում Մարքսի տունը դառնում ե կոմունարների համար ապաստան: Ջեննին աղջիկների հետ, ինչպես ասում են, վոտից, ձեռից ընկնում են, այնքան վոր պահում, խնամում են կոմունայի փախստականներին:

ՄԱՀԸ

Հեղափոխությունը վերջանում ե: Մարքսը նորից անցնում ե իր «Կապիտալի» աշխատանքին: Բայց նրա ուժերն արդեն սպառված են լինում: Չքափորությունը, կենսական վատ

պայմանները—այդ ամենն արտահայտվում են նրա կազմվածքի վրա:

Մարքսն սկսում ե ծանր և յերկար հիվանդանալ: Դրա վրա ավելանում են հարված հարվածի հետևից, վորոնք թուլացնում եյին նրա որդանիզմը: Մեռնում են յերեխաները, մեռնում են մոտիկ մարդիկ:

Բայց Կարլը դարձյալ զինաթափ չի լինում: Իր ուժերի բոլոր մնացորդը նա դնում ե աշխատանքի վրա: Բացի իր հիմնական աշխատանքից, վոր տարվում եր «Կապիտալի» յերկրորդ հատորի վրա, նա անդուլ շարունակում ե ղեկավարել բանվորական շարժումը բոլոր յերկրներում:

Բայց նրա ձայնը հետզհետե ավելի սակավ ե լսվում իր բարեկամների շրջանում: Ավելի պակաս ե լսվում նրա ճաքճաքուն, վարպետ ծիծաղը: Ավելի քիչ ե լսվում նրա յեռանդուն, յեռուն խոսքը:

1881 թվին Մարքսի գլխին մի այնպիսի անբախտություն ե գալիս, վորը հաղիվ թե նրան վոտից չի գցում: Ծանր, տանջող հիվանդությունից մեռնում ե Ջեննին—նրա ուրախություններն ու տխրությունները բաժանող հավատարիմ, անդամաճան ընկերը:

Յերբ Ենդելսը նայում ե վշտահար Մարքսի վրա, աչքերից արցունք ե գալիս:

— Հիմա Մարքսն ել նույնպես մեռած ե,— ասում ե նա իր բարեկամներին:

Յեւ իսկապես, Մարքսը Ջեննիից միայն

15 ամիս ե ավելի ապրում: 1883 թվի մարտի 14-ին աշխատավորության մեծ ուսուցիչը ընում ե ընդմիշտ, նստած բազկաթոռում, աշխատանքի սեղանի առաջ:

Թաղում են նրան առանց ծեսերի:

Ենգելսը հեկեկոցի դողդղջուն ձայնով ասում ե նորավոր շիրմի առաջ.

— Դադարեց մտածելուց մեծ ուսուցիչը.

նրա անունը և ստեղծագործությունները դարեր կապեն:

ՄԱՐԲՍԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԸ

Մարքսը մեռնում ե կապելով պրոլետարիատին պայքար ազատության համար: Մարքսը չի սպասում իր նախագուշակած՝ պրոլետարիատի հաղթանակին:

Բայց Կարլ Մարքսի մահվան տարին աշխատավորության մյուս մեծ առաջնորդ Լենինը դառնում ե 13 տարեկան: Լենինը տարիներով ուսումնասիրում ե Մարքսի «Կապիտալը»: Այդ դառնում ե նրա ամենասիրելի գիրքը:

Մարքսի ուսմունքն ոգնում ե, վոր Լենինն աշխատավորությանը տանի գեպի հեղափոխություն, գեպի հաղթանակ:

Լենինը շարունակում ե Մարքսի աշխատանքը—միացնել բոլոր յերկրների բանվորներին իրար հետ: Առաջին Ինտերնացիոնալը վերջ ե դնում իր գոյությանը 1876 թվին: 1889 թվին ստեղծվում ե Յերկրորդ Ինտերնացիոնալը: Բայց այդ Յերկրորդ Ինտերնացիոնալը դավա-

ճանում ե բանվորական գաղափարգի գործին: Պրոլետարիատի շահերի պաշտպանման տակ նա սկսում ե բուրժուազիային ոգնել:

Այն ժամանակ 1889 թվին Լենինը կազմակերպում ե Յերրորդ Ինտերնացիոնալը, Կոմունիստական Ինտերնացիոնալը: Այնտեղ մտնում են բոլոր յերկրների կոմունիստները:

Ուսա բանվորներն ու գյուղացիները Լենինի հիմնած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մի մեծ գործի սկիզբն են դնում: Նրանք առաջինն ամբողջ աշխարհում կատարում են սոցիալիստական մեծ հեղափոխությունը:

Մարքսի ուսմունքը Լենինի կուսակցության ղեկավարությամբ գործադրվում ե գործնականապես: Կապիտալիստները վռնդվում են: Իշխանությունն իր ձեռքն առնելուց հետո պրոլետարիատը սահմանում ե իր ղեկատուության: Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվոր գաղափարգը և աշխատավոր գյուղացիությունը սոցիալիզմի համար մեծ պայքար են վարում:

Բայց ուրիշ յերկրներում աշխատավորությանը դեռ չի հաջողվում վռնդել իր կեղեքիչներին: Ուրիշ յերկրներում անողորմ պայքար ե տեղի ունենում բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Այդ պայքարը ղեկավարում են կոմունիստական կուսակցությունները:

Մոտենում ե այն ժամանակը, յերբ ուրիշ յերկրների աշխատավորները կտապալեն բուր-

Ժուաղիայի իշխանութիւնը և ձեռք կրերեն
իրենց ազատութիւնը:

Մարքսի և Լենինի գործը հաղթանակ կտա-
նի ընդհանուր աշխարհում:



Սրբագրեց՝ ԳԱՐ. ՀԱՅՈՐԵԱՆ

Քարգմ. ԽՆԿՈ ԱՊՆՐ

Գեորգիայի տպարան

Յերեան

Գլխավոր 6080, Հրատ 2507, Գառլիեր 533, Տիրամ 3000.

ՀՀ Ազգային գրադարան



NL0173184

ԳԻՆԸ 30 Կ

13
Арм.

2-6329

Г.П.Б. в Лнгр

А. 1933 г.

Акт № 152

Вл. Черевков
Великий учитель

Госиздат С С Р А
Эривань 1933